ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՉԱՓԱԳՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ /ԳԾԱԳՐԵՐԻ/ ԿԱԶՄՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԾՁԲ-26/06»*

ք. Թալին «10» փետրվարի 2026թ.

Թալինի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն Զավեն Իգիթխանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **անշարժ գույքի չափագրման հատակագծերի /գծագրերի/ կազմման մասնագիտական ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:[1]

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.[2]

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

---

[1] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա «մատուցվում է» բառից հետո լրացվում է «քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին և» բառերը*

[2] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա 2.1.2 կետի «ա» պարբերությունը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ. «Չընդունել ծառայությունը և սահմանել ողջամիտ ժամկետ ոչ պատշաճ ծառայությունը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան (անհատույց) պատշաճ մատուցելու և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքն ու 5.3 կետով նախատեսված տույժը»*

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:[3]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:[4]

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման

---

[3] *Հանվում է պայմանագրից, եթե մատուցվելիք ծառայությունը չի վերաբերում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննության իրականացմանը:*

[4] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա պայմանագրի նախագծի 3.1 կետը 2-րդ նախադասությունից հետո լրացվում է հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ, «Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում մատուցված և Պատվիրատուին ներկայացված ծառայության արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կատարողը ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվաատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպմանը, կահավորմանը , տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ՝ հարմարվողականության միջոցառումները) նորմերը և Պատվիրատուին ներկայացրել գրավոր հավաստում՝ ամենօրյա ռեժիմով կապալառուի կողմից շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ՝ հարմարվողականության միջոցառումները) նորմերը պահպանած կամ չպահպանված լինելու վերաբերյալ:Ընդ որում հավաստման մեջ մանրամասն ներկայացվում են կանոնները և/կամ նորմերը չպահպանելու փաստը հավաստող հիմքերը:»:*

իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **20000000** (քսան միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[5]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[6]

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:[7]

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[8] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

---

[5] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[6] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

[7] *Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:*

[8] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:[9]

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[10]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[9] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա պայմանագրի նախագծը լրացվում է հետևյալ բովանդակությամբ 5.5.1 կետով. «5.5.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման,կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման, ինչպես նաև սույն պայմանագրի 3.1 կետում նշված գրավոր հավաստումը չտրամադրելու համար Կատարողի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.*

...» իսկ 5.4 կետում «5.2 և 5.3 » թվերը փոխարինվում են «5.2,5.3 և 5.5.1» թվերով:

[10] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[11]

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

---

[11] *Եթե Պատվիրատուն հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է՝«վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական տալու» բառերով:*

7.12 Սույն պայմանագիրը կազմված է __6__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Թալինի համայնքապետարան	«Գեոգլոբալ» ՍՊԸ
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Թալին Գայի 1	ՀՀ ք. Երևան, Նոր-Նորք,
Բանկը՝ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	Կարախանյան փ. 36շ բն 23
ՀՀ 900462151045	Բանկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՎՀՀ 00530561	ՀՀ 22029012658000
Համայնքի ղեկավար՝ Ս.Սարգսյան	ՀՎՀՀ 00491374
_____	Տնօրեն՝ Հ. Իգիթխանյան
(ստորագրություն)	_____
	(ստորագրություն)
	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«10» փետրվարի 2026թ. կնքված
«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԾՁԲ-26/06»* ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71251100	Անշարժ գույքի չափագրման, հատակագծերի /գծագրերի/ կազմման ծառայություններ Վճարումը կատարվելու է փաստացի մատուցված ծառայությունների համար		20000000		Կատարողը նշված ծառայության մատուցումը իրականացնում է ՀՀ տարածքում, իսկ մատուցվող ծառայության արդյունքը հանձնում է ք.Թալին Գայի 1 հասցեում	Ծառայությունների գնումը կիրականացվի պատվիրատուի կողմից ներկայացված հայտերի (պատվերների) հիման վրա, ընդ որում, Կատարողը հայտը (պատվերը) ստանալուց հետո Թալին համայնքում գտնվող անշարժ գույքի չափագրումը, հատակագծի կազմումը և համայնքապետարանին տրամադրումը պետք է իրականացնի մինչև 7 օրյա ժամկետում, պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 30.12.2026 թ.

Պարտադիր պայման՝ Ծառայությունների մատուցում ARM WGS-84 համակարգի միջոցով (անհրաժեշտության դեպքում բազայի առկայություն)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Թալին համայնքապետարան
ՀՀ Արարատի մարզ, ք.Թալին, Գայի 1
Հեռախոսահամար՝ վարչություն
ՀՀ 90040, 255045
+374 95 530561
Համայնքի ղեկավար՝ Տ. Մափեյան

(ստորագրություն)
L.S.

ԿԱՏԱՐՈՂ
«Գեոգլոբալ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Նոր-Նորք,
Կարախանյան փ, 36շ բն 23
Բանկ՝«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ 22029012656800
ՀՎՀՀ 00491374
Տնօրեն՝ Հ. Բրգիթիանյան

(ստորագրություն)
L.S.

ԳՆԱՑՈՒՑԱԿ
մատուցվող ծառայությունների

հավելված 1.1.

Անվանումը	Չափման միավորը	քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ
Բնակելի, արդյունաբերական և հասարակական նշանակության հողամասեր	քմ	1-1000 ներառյալ	16000
Բնակելի, արդյունաբերական և հասարակական նշանակության հողամասեր	քմ	1000-10000 ներառյալ	18000
Բնակելի, արդյունաբերական և հասարակական նշանակության հողամասեր	հա	1 -5 հա ներառյալ	1
Բնակելի, արդյունաբերական և հասարակական նշանակության հողամասեր	հա	5հա և ավելի	1
գյուղատնտեսական նշանակության հողամասեր	քմ	1-1000 ներառյալ	16000
գյուղատնտեսական նշանակության հողամասեր	քմ	1000-10000 ներառյալ	18000
գյուղատնտեսական նշանակության հողամասեր	քմ	10000-50000 ներառյալ	1
գյուղատնտեսական նշանակության հողամասեր	քմ	5հա-ից ավելի դեպքում	1
Շինություն	քմ	1մ^2	100
Հողամասի հանութագրում	քմ	1-2000 ներառյալ	1
Հողամասի հանութագրում	քմ	2001-10000 ներառյալ	1
Հողամասի հանութագրում	հա	1-5 ներառյալ	1
Հողամասի ժամանակավոր սխեմաներ	քմ	1:1000 ներառյալ	1
Հողամասի ժամանակավոր սխեմաներ	քմ	1:1500 ներառյալ	1
Հողամասի ժամանակավոր սխեմաներ	քմ	1:5000,10000 ներառյալ	1
Հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար նախատեսված իրավիճակային հատակագծերի փաթեթ	փաթեթ	1	20000
Ինժիներական ենթակառուցվածքներ/գազատարներ, ջրատարներ, հոսանքի գծեր	Գծ/մ	1-100 գծ/մ	100
Ինժիներական ենթակառուցվածքներ/գազատարներ, ջրատարներ, հոսանքի գծեր	Գծ/մ	100-1000 գծ/մ	90
Ինժիներական ենթակառուցվածքներ/գազատարներ, ջրատարներ, հոսանքի գծեր	Գծ/մ	1000 և ավել գծ/մ	70
Գեոդեզիա	/բեկման կետի նշահարում/	1-10 /յուրաքանչյուր կետի/	1
		10-և ավել /յուրաքանչյուր կետի/	3000
ԸՆԴՀԱՄԵՆԸ			91371

Ծառայությունները մատուցվելու են կարիքն առաջանալու պահանջին համապատասխան՝ յուրաքանչյուր մինչև 5 միավոր ծառայության համար պահանջն առաջանալու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում: 5-ից ավել միավոր ծառայության համար պահանջն առաջանալու օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումները կատարվելու են փաստացի մատուցված ծառայություններին համապատասխան:

Նախատեսվում են իրականացնել.

Ընդհանուր դրույթներ.

- Թալին համայնքի կարիքների համար կատարել չափագրման, հողաշինարարության հետ կապված աշխատանքներ

Հիմնական պարտականություններ՝

- Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի, շենք-շինությունների չափագրում,

- հողաշինարարության,
- քարտեզագրման Գեոդեզիական հանույթների իրականացում, տեղակապամում, նշահարում
- Չափագրման ակտերի ու մասնագիտական եզրակացությունների կազմում

Այլ պահանջներ՝ Չափագրման ակտերը ներկայացնել 2 թղթային օրիգինալ օրինակով,

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՉԱՓԱԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Թալինի համայնքապետարանի պատվերով Կատարողի կողմից պետք է կազմվեն և տրամադրվեն համայնքապետարանի տնօրինության հողամասերի հատակագծեր, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության 29.09.2011թ. N 1441-Ն որոշման և ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 08.04.2021թ. թիվ 75-Ն հրամանով սահմանված հողամասի հատակագծին ներկայացվող ներքոհիշյալ պարտադիր պահանջներին և սահմանված կարգին: Հողամասերը տեղակայված են ՀՀ Թալին խոշորացված համայնքի ողջ տարածքում: Յուրաքանչյուր անգամ պատվեր տալուց պատվիրատուի կողմից հստակ կնշվի չափագրման ենթակա հողամասի գտնվելու վայրը:

Պատվիրատուի կողմից նույն օրում հնարավոր մեկից ավելի պատվերի դեպքում հաշվարկվում է ստորև նշված ժամկետները:

Հատակագծեր կազմողը պատվերը ստանալուց հետո Թալին համայնքում գտնվող հողամասերի չափագրումը, հատակագծի կազմումը և համայնքապետարանին տրամադրումը պետք է իրականացնի մինչև 7 օրյա, ժամկետում: Նշված ժամկետներում ծառայության արդյունքները չներկայացնելու դեպքում պետք է տրամադրվի գրավոր պարզաբանում: Թալինի համայնքապետարանի կողմից ներկայացված պարզաբանումը ոչ հիմնավոր գնահատվելու դեպքում՝ ուշացված ժամկետների մասով կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Հատակագծեր կազմողը պարտավոր է մինչև հողամասի պետական գրանցումը՝ հատակագծերում անվճար կատարել անհրաժեշտ ուղղումներ և փոփոխություններ՝ առաջադրանքը ստանալուց հետո վերը նշված ժամկետներում (ըստ հողամասի տեղակայման վայրի):

Եթե պայմանագրի կատարման ընթացքում պարզվի, որ հատակագիծը կազմելու համար անհրաժեշտ են սույն տեխնիկական բնութագրով չնախատեսված հետազոտություններ կամ այլ գործողություններ, ապա դրանք իրականացվում են Կատարողի կողմից՝ առանց լրացուցիչ վճարի:

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՁԵՎԸ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1.Հողամասի հատակագիծը կազմվում է համապատասխան իրավական ակտերով փոխանցված, հատկացված կամ իրավունքների պետական գրանցում ստացած հողամասի չափերով՝ նշելով և համարակալելով բոլոր շրջադարձային (բեկման) կետերը, կոորդինատները, դրանց միջև եղած երկարությունները՝ հորիզոնական պրոյեկցիաներով: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված հողամասի սահմանները հատակագծում ամբողջությամբ պատկերվում է չընդհատվող գծերով:

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված հողամասին կից ինքնակամ զբաղեցված հողամասի առկայության դեպքում անհրաժեշտ է ընդհանուր սահմանագիծը գծել ընդհատված գծերով: Հողամասի հատակագծային հատվածում գծվում է միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված հողամասը:

2. Ենթակառուցվածքների օբյեկտները (գազամատակարարման, ջրամատակարարման, կոյուղատար և այլ նշանակության խողովակաշարերի ստորգետնյա, վերգետնյա և օդային ուղիներ, էլեկտրամատակարարման, կապի մալուխային գծեր, ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհներ ու այլ ենթակառուցվածքների հաղորդակցության գծեր, դրանց հենասյուներ, հորեր, կից այլ շինություններ), դրանց կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասերը շրջադարձային (բեկման) կետերի կոորդինատներով արտացոլվում են հողամասի հատակագծում, իսկ դրանց կազմում գտնվող շինությունները՝ շինությունների հատակագծում:

3. Հողամասի հանութագրման ընթացքում արտաքին սահմաններով չափագրվում են նաև հողամասում գտնվող բոլոր շինությունները, որոնք համարակալվում և ըստ տեղադրության արտացոլվում են հողամասի հատակագծում:

4. Հողամասի հատակագծում բոլոր շինությունների արտաքին սահմանները գծագրվում են չընդհատվող գծերով:

5. Ինքնակամ կառուցված կամ այլ անձին պատկանող շինությունները նշագծվում (շտրիխապատվում) են տարբեր պայմանական նշաններով, որոնց վերաբերյալ բացատրությունը բերվում է հատակագծի «Լրացուցիչ նշումներ» հատվածում:

6. Հողամասի հատակագծում օգտագործված այլ պայմանական նշանների վերաբերյալ բացատրությունը բերվում է հատակագծի «Լրացուցիչ նշումներ» հատվածում:

7. Չափագրվում են քարե և/կամ բետոնե պարիսպների երկարությունը, լայնությունը և բարձրությունը: Այդ պարիսպները հողամասի հատակագծում նշվում են պարիսպի հաստությամբ չընդհատվող գծերով:

8. Եթե հողամասում կան տարածքներ, որոնք պատվիրատուին տրամադրվում են այլ իրավունքներով, ապա հատակագծի վրա այդ տարածքը նշագծվում (շտրիխապատվում) է և հատակագծի «Լրացուցիչ նշումներ» բաժնում կատարվում է համապատասխան նշում՝ դրա մակերեսի, այլ իրավունքով տրամադրման վերաբերյալ:

9. Եթե գրանցված հողամասի մեջ կառուցվել է նոր շինություն, ապա պատվիրատուի պահանջով կարող է չափագրվել միայն նոր կառուցված շինությունը, իսկ եթե նոր շինությունը կառուցվել է առկա շինությանը կից, և այն կրկին փոփոխությունների չի ենթարկվել, ապա պատվիրատուի պահանջով չափագրվում է միայն նոր կառուցված շինությունը, որը սահմանված կարգով արտացոլվում է հողամասի հատակագծում: Եթե իրավունքի պետական գրանցման վկայականում առկա շինությունը քարտեզում տեղադրվել է սխալ դիրքով, ապա պատվիրատուի պահանջով չափագրվում և ուղղվում է միայն տեղադիրքը: Հողամասի հատակագծում իրավունքի պետական գրանցում ստացած բոլոր չչափագրված շինությունները հատակագծում պատկերվում են ըստ էլեկտրոնային կադաստրային քարտեզում եղած դիրքի:

10. Բաժանվող հողամասի հատակագիծը ներկայացվում է սխեմայով, հետևյալ կերպ. պատկերվում է ընդհանուր հողամասը՝ բաժանված առանձին մասերի, որոնք շտրիխապատվում են և համարակալվում: Հողամասը երկուսից ավելի միավորների բաժանման դեպքում տարբեր հողամասերի համար շտրիխապատումը պետք է միմյանցից տարբերվի: Սխեմայում նշվում են նաև բոլոր հողամասերի մակերեսները: Բաժանվող յուրաքանչյուր մասի համար սահմանված կարգով կազմվում է նաև առանձնացված հողամասի հատակագիծը: Բաժանման սխեման բոլոր առանձնացվող մասերի համար մնում է նույնը:

20. Միավորվող հողամասերի հատակագիծը ներկայացվում է սխեմայով, որի վրա պատկերվում են միավորվող հողամասերը և համարակալվում են: Սխեմայում նշվում են նաև բոլոր հողամասերի մակերեսները: Միավորված հողամասի համար սահմանված կարգով կազմվում է առանձին հատակագիծ:

22. Հողամասի հատակագծի կազմման համար պետք է լրացվեն և պահպանվեն հետևյալ պահանջները.

1) Հողամասի հատակագծի առաջին էջում՝ «Հողամասի հատակագիծ» գլխատառերով նշագրումից ներքևի մասի ձախ կողմում լրացվում է սեփականատիրոջ տվյալները (ֆիզիկական անձի անուն, ազգանուն կամ իրավաբանական անձի անվանում):

2) «Մարզ, համայնք, հասցե» տողում լրացվում է հողամասի գտնվելու վայրը կամ հասցեն:

3) Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման, ինչպես նաև սահմանված կարգով կադաստրային քարտեզի ուղղման ժամանակ հատակագծի վերևի աջ անկյունում՝ «Հաստատում եմ» տողում, լրացվում է համայնքի ղեկավարի անունը, ազգանունը, ստորագրվում է համայնքի ղեկավարի կողմից և կնքվում է:

4) Հողամասի և շինությունների շրջադարձային (բեկման) կետերը համարակալվում են թվերով՝ աճման կարգով, ժամացույցի սլաքի շարժման ուղղությամբ:

5) Հողամասի հատակագիծը գծագրվում է 1:200, 1:500, 1:1'000, 1:2'000, 1:5'000 կամ 1:10'000 մասշտաբով՝ կախված տրամադրվող հողամասի չափից:

6) Հատակագծի ներքևի ձախ հատվածում նշվում են՝

ա. հողամասի մակերեսը՝ հեկտարով (0.00000 ճշտությամբ),

բ. հողամասի կադաստրային ծածկագիրը, եթե այդպիսին կա,

գ. հողամասի նպատակային նշանակությունը,

դ. հողամասի գործառնական նշանակությունները կամ հողատեսքը:

7) Հատակագծի ներքևի միջին հատվածում նշվում են հողամասի շրջադարձային (բեկման) կետերի համարները, կոորդինատները՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով, այդ կետերի միջև գծային չափերը՝ հորիզոնական պրոյեկցիաներով: Եթե հողամասի շրջադարձային բեկման կետերի քանակն այնպիսին է, որ դրանք հնարավոր չէ տեղադրել սույն կետով նշված հատվածում, ապա համապատասխան տվյալները կարող են տեղադրվել թղթի հակառակ երեսին կամ հաջորդ թղթի վրա, որտեղ նշվում է նաև շինությունների համարները ըստ հողամասի հատակագծի, շինության անվանումը (գործառնական նշանակությունը), շրջադարձային (բեկման) կետերի համարները, կոորդինատները՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով, և եզրագծերի հորիզոնական պրոյեկցիաների երկարությունները:

23. Հողամասի հատակագծի բոլոր էջերի ներքևի աջ մասում լրացվում է որակավորում ունեցող անձի անուն-ազգանունը, որակավորման վկայականի համարը, ԱՁ/իրավաբանական անձի անվանումը, ՀՎՀՀ-ն, չափագրման օրը, հատակագծի թողարկման օրը, և այն ստորագրվում ու հաստատվում է ԱՁ/իրավաբանական անձի և որակավորում ունեցող անձի կողմից:

ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԱԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Թալինի համայնքապետարանի պատվերով պետք է կազմվի և տրամադրվի համայնքապետարանին շինությունների հատակագծեր, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության 29.09.2011թ. N 1441-Ն որոշման և ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 08.04.2021թ. թիվ 75-Ն հրամանով սահմանված հողամասի հատակագծին ներկայացվող ներքոհիշյալ պարտադիր պահանջներին և սահմանված կարգին: Չափագրման ենթակա շենք-շինությունները գտնվում են ՀՀ ողջ տարածքում: Յուրաքանչյուր անգամ պատվեր տալուց պատվիրատուի կողմից հստակ կնշվի չափագրման ենթակա անշարժ գույքի գտնվելու վայրը:

Պատվիրատուի կողմից նույն օրում հնարավոր մեկից ավելի պատվերի դեպքում հաշվարկվում է ստորև նշված ժամկետները:

Հատակագիծ կազմողը պատվերը ստանալուց հետո Թալին քաղաքում և քաղաքին սահմանակից բնակավայրերում գտնվող անշարժ գույքի չափագրումը, հատակագծի կազմումը և համայնքապետարանին տրամադրումը պետք է իրականացվի մինչև 7 օրյա ժամկետում: Նշված ժամկետներում ծառայության արդյունքները չներկայացնելու դեպքում պետք է տրամադրվի գրավոր պարզաբանում: համայնքապետարանի կողմից ներկայացված պարզաբանումը ոչ հիմնավոր գնահատվելու դեպքում՝ ուշացված ժամկետների մասով կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Հատակագծեր կազմողը պարտավոր է մինչև անշարժ գույքի պետական գրանցումը՝ հատակագծերում անվճար կատարել անհրաժեշտ ուղղումներ և փոփոխություններ՝ առաջադրանքը ստանալուց հետո վերը նշված ժամկետներում (ըստ անշարժ գույքի տեղակայման վայրի):

Եթե պայմանագրի կատարման ընթացքում պարզվի, որ հատակագիծը կազմելու համար անհրաժեշտ են սույն տեխնիկական բնութագրով չնախատեսված հետազոտություններ կամ այլ գործողություններ, ապա դրանք իրականացվում են Կատարողի կողմից՝ առանց լրացուցիչ վճարի:

ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1 Արտաքին չափերով շինության չափագրումն ավարտելուց հետո չափագրվում են դրա ծավալում գտնվող բոլոր տարածքները՝ ներքին չափերով: Չափագրվում են յուրաքանչյուր տարածքի պարագծային չափերը, ներքին բարձրությունը, ինչպես նաև կրող պատերի և միջնապատերի (միջնորմների) հաստությունները:

2 Բազմաբնակարան բնակելի շենքի ծավալում գտնվող բնակարանները, հասարակական և արտադրական նշանակության ոչ բնակելի տարածքները, ավտոտնակները չափագրվում են միայն ներքին չափերով:

3 Չափագրվում են յուրաքանչյուր տարածքի պարագծային չափերը, ներքին բարձրությունը, ինչպես նաև կրող պատերի և միջնորմների հաստությունները:

4 Ներքին հորիզոնական չափագրումները կատարվում են շինությունների հատակից 1.20 բարձրությամբ, իսկ 1.20 մետրից պակաս բարձրություն ունեցող շինությունները (տարածքները, դրանցում առկա խորշերը) չեն չափագրվում՝ բացառությամբ հարթակների, հիմքերի, պարիսպների և այլ բարելավումների: Չափագրվող շինության յուրաքանչյուր տարածք համարակալվում է, որի վրա նշվում են առկա դռների ու պատուհանների տեղադրությունները:

5. Շինության հատակագծում միջնորմների տվյալների փոփոխությունները, նախագծային կամ գրանցված տվյալների համեմատ, որպես ինքնակամ չեն նշվում:

6. Շինության գծային չափերը հատակագծում նշվում են մետրով՝ 0.00 ճշտությամբ, իսկ մակերեսը՝ քառակուսի մետրով՝ 0.0 ճշտությամբ:

7 Բաժանվող շինության սխեմայում պատկերվում է ընդհանուր գույքը, որի վրա նշագծվում (շտրիխապատվում) և ցույց է տրվում բաժանվող մասը(երը): Բաժանվող մասի (երի) համար սահմանված կարգով կազմվում է Բաժանված շինության հատակագիծ:

8 Միավորվող շինությունների հատակագիծը ներկայացվում է սխեմայով, որի վրա պատկերվում են միավորվող շինությունները և համարակալվում են: Շինության սխեմայում նշվում է միավորման արդյունքում ստացված մակերեսը, ինչպես նաև առանձին միավորների մակերեսները՝ ըստ համարակալման: Միավորված շինության համար սահմանված կարգով կազմվում է առանձին հատակագիծ:

9 Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շինությունում (շենքերում՝ շենքերի ծավալից դուրս կամ հիմնական պատերից դուրս) բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների (պատշգամբ, սենյակ, խոհանոց, աստիճանավանդակ և այլն) հատակագիծը կազմվում է բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի հատակագծի հետ միասին, նշագծվում է (շտրիխապատվում) ինքնակամ կառույցը (շինության հատակագծից բացի՝ կազմվում է հողամասի սխեմատիկ հատակագիծ, որի վրա ցույց է տրվում շենքը կցակառույցի հետ միասին, և նշվում է կցակառույցի հեռավորությունը շենքի անկյուններից):

10. Եթե իրավունքների պետական գրանցում ստացած բազմահարկ շինության (շենքի) որևէ հարկում կատարվել է ներքին փոփոխություն, ապա պատվիրատուի պահանջով չափագրվում է միայն տվյալ հարկը: Ստորաբաժանված շինության պարագայում չափագրվում է միայն փոփոխության ենթարկված գույքային միավորը:

11 Թեք (կամ կոր) առաստաղի կամ տարածքում (սենյակում) տարբեր բարձրությունների առկայության դեպքում դրանք չափվում են, և հատակագծում նշվում է այդ բարձրությունների միջին թվաբանական բարձրությունը:

12 Դեկորատիվ (կեղծ կամ կախովի) առաստաղների առկայության դեպքում, եթե հնարավոր չէ չափել իրական բարձրությունը, հիմք է ընդունվում նախկինում գրանցված, իսկ դրա բացակայության դեպքում՝ նախագծային բարձրությունը: Նշված հիմքերի բացակայության և առաստաղի իրական բարձրությունը պարզելու անհնարինության դեպքում չափվում է փաստացի բարձրությունը:

13 Տարածքի (սենյակի) մակերեսը հաշվարկելիս հաշվի չեն առնվում հատակից մինչև 1.20 մետր բարձրությամբ խորշերը, ելուստները, ինչպես նաև միջնորմերի դռների մակերեսները և պատուհանագոգերը:

14 Զտեղադրված դռների՝ 1.5 մ և ավելի անցումների գբաղեցրած տարածքների մակերեսները ներառվում են սենյակի ներքին մակերեսների մեջ:

15. Շինությունների հատակագիծը կազմելիս պետք է լրացվեն և պահպանվեն հետևյալ պահանջները.

1) Շինության հատակագծի առաջին էջում՝ «Շինության հատակագիծ» գլխատառերով նշագրումից ներքև գտնվող «Մարզ, համայնք, հասցե» տողում, լրացվում են շինության (ների) գտնվելու վայրը և հասցեն:

2) Հացեից ներքև գրվում է սեփականատիրոջ տվյալները (ֆիզիկական անձի անուն, ազգանուն, իրավաբանական անձի անվանում):

3) Շինության հատակագծում գծագրվում են հողամասում գտնվող բոլոր շինությունների հատակագծերն ըստ հարկերի՝ ներքին չափերով: Եթե հատկացված հողամասում կառուցված շինության մի մասը գտնվում է հատկացված հողամասում, իսկ մյուս մասը զավթած հողամասում, ապա նշված բաժանարար հատվածը շինության հատակագծում պատկերվում են ընդհատ գծերով:

4) Բազմաբնակարան շենքերում տեղակայված հասարակական, արտադրական շինությունների և բնակարանների պարագայում տրվում են նաև կառուցապատման մակերեսները: Կառուցապատման մակերես է համարվում բնակարանի ներքին մակերեսի և ոչ կոնստրուկտիվ տարրերի (միջնորմերի մակերեսները պետք է ներառվեն կառուցապատման մակերեսների մեջ) գումարային մակերեսը: Կառուցապատման մակերեսների մեջ չեն ներառվում արտաքին պատերը, օդատար ծխատար շախտաները:

5) Հատակագծի վերևի մասում գծագրվում են նկուղային (ստորգետնյա), կիսանկուղային հարկերը, այնուհետև հերթականությամբ գծագրվում են մնացած հարկերը և օժանդակ շինությունները:

6) Շենքերի և շինությունների գծագրերը կազմվում են 1:100, 1:200 և 1:500 մասշտաբներով:

7) Հարկի ներքին տարածքները հատակագծի վրա համարակալվում են մուտքի դռնից սկսած ժամացույցի սլաքի ուղղությամբ, յուրաքանչյուր տարածքի կենտրոնում գիծ է գծվում և համարիչում գրվում է հերթական համարը, իսկ հայտարարում՝ տվյալ տարածքի մակերեսը:

8) Յուրաքանչյուր հարկի գծագրի վրա նշվում է առկա դռների, պատուհանների, բաց պատշգամբի տեղադրությունը: Տարածքների ներքին չափագրման ժամանակ նշվում են նաև աստիճանավանդակները և որմնախորշերը:

9) Յուրաքանչյուր հարկի գծագրին կից գրվում է շինության համարը (ըստ հողամասի հատակագծի), հարկի անվանումը (նկուղ, կիսանկուղ, 1-ին հարկ և այլն), ներքին բարձրությունը, պատերի և միջնապատերի հաստությունները:

10) Եթե շինության տարածքի համարակալման և մակերեսի չափի կոտորակը ընթեռնելի չէ տարածքի ներսում, ապա այն սլաքով դուրս է բերվում գծագրից և գրվում է ազատ տեղում:

11) Եթե շինության մակերեսների մեծ լինելու կամ հարկերի քանակը շատ լինելու պատճառով լրիվ գծագիրը չի տեղավորվում հատակագծի վրա, ապա մնացած հարկերի համար գծագրվում են լրացուցիչ հատակագծեր:

ա. Շինությունների քանակական և որակական տվյալները լրացվում են չափագրողների առցանց գրասենյակում, որի արդյունքում ինքնաշխատ եղանակով կազմվում է շինությունների բնութագիր, որը ենթակա չէ հաստատման չափագրողի և իրավաբանական անձի կողմից: Շինությունների նպատակային նշանակությունը լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի N 1194-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի N 757-Ն որոշումներով սահմանված ցանկերի համաձայն:

բ. Շինությունների ավարտվածության աստիճանը լրացվում է (համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 29-ի N 645-Ն որոշման), որը կիրառվում է բացառապես տվյալ գույքի կադաստրային գնահատության համար:

Վճարումները կատարվելու են փաստացի կատարված աշխատանքների համար

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Թալինի համայնքապետարան	«Գեոգլոբալ» ՍՊԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Թալին, Գայի 1	ՀՀ ք. Երևան, Նոր-Նորք,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	Կարախանյան փ, 36շ բն 23
ՀՀ 900462151045	Բանկ՝«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՎՀՀ 05030561	ՀՀ 220290126568000
Համայնքի ղեկավար Տ.Սափեյան	ՀՎՀՀ 00491374
	Տնօրեն՝ Ձ. Իգիթխանյան
------------------------	------------------------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
« 10 » փետրվարի 2026 թ. կնքված
«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԾՁԲ-26/06»* ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71251100	Անշարժ գույքի չափագրման, հատակագծերի /գծագրերի/ կազմման ծառայություններ		20000000	20000000	20000000	20000000	20000000	20000000	20000000	20000000	20000000	20000000	20000000	20000000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Թալինի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Թալին, Գայի 1
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՀ 900462151045
ՀՎՀՀ [illegible]30561
Համայնքի ղեկավար Տ. Սափեյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Գեոգլոբալ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Նոր-Նորք,
Կարախանյան փ. 36շ բն 23
Բանկ՝«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ220290126568000
ՀՎՀՀ 00491374
Տնօրեն Չ. Փգիթմանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 4.2
«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԾՁԲ-26/06»*ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան «_____»_____ 20 թ.

«ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Զավեն Իգիթխանյանի (նույն. քարտ 011489184)
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Թալինի համայնքապետարանի * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը
կազմակերպված՝ «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԾՁԲ-26/06» * ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ

ընկերության անվանումը

ՀՀ ք. Երևան, Նոր Նորք , Կարախանյան փ, 36շ բն 23

ընկերության հասցեն

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

220290126568000

ընկերության բանկային հաշվեհամարը

00491374

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Զավեն Իգիթխանյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը

ստորագրությունը

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից, որտեղ հրակերը ստորագրում հրապարակելը:*

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ **«ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ**	
5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝220290126568000	
7. Վճարողի ՀՎՀՀ՝00491374	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **Թալինի համայնքապետարան**	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ **05030561**	
12.Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900465101096**	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ **3 000 000** (երեք միլիոն)	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ AMD**	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ ***(որակավորման ապահովման համար)***	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ***«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԾՁԲ-26/06»***	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

Հավելված 5.1
«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԾՁԲ-26/06»*ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «_____»_____ 2026թ.

«ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Զավեն Իգիթխանյանի (նույն.քարտ 011489184)
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Թալինի համայնքապետարանի * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը

կազմակերպված՝ «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԾՁԲ-26/06»* * ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.5 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.6 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.7 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ

ընկերության անվանումը

ՀՀ ք. Երևան, Նոր Նորք , Կարախանյան փ. 36շ բն 23

ընկերության հասցեն

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

ընկերությունը սպասարկող բանկի անվանումը

220290126568000

ընկերության բանկային հաշվեհամարը

00491374

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Զավեն Իգիթխանյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը ստորագրությունը

Կ.Տ

/ /2026թ

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ **«ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ**	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝220290126568000	
7. Վճարողի ՀՎՀՀ՝00491374	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **Թալինի համայնքապետարան**	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ **05030561**	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900465101096**	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ **2 000 000** (երկու միլիոն)	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ AMD**	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարմանապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ***«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԾՁԲ-26/06»***	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.